

ՆՈՐ ԿԵՆՆՔ.

Կէս զիշեր էր: Մինչ ի տաղնապ ցաւոց բուռն
Կմաշուէի կէս քուն մոօք, կէս արթուն.
Մինչ երանի՛ կուտայի լաւ օրերուս
Եւ յերկնից լոկ բժշկութեան մնացել յոյս.
Մինչ ակնապիշ աղօտափայլ զամբարին
Ատեն առեն վայ կուտայի իմ կեանքին,
Որ վիճակուեց Հայաստանիս սուրբ կարօտ
Առնուլ ի զիրկ հիւսնդութեան մահահոտ,
Եւ յուսահատ յուզմունք սրտիս վշտաբեկ
Կսպառնային փութացընել մահուան տէգ.
Մէկ յոյս չբնաղ կկապէր զիս այս կեանքին,
Եւ այն յոյսն էր ապագայ փառքն իմ ազգին:

* *

Մինչ աչքս մոլար բնական բերմամբ հիւանդաց՝
Չեղուն, անկիւն կյածէին սղազեղաց,
Յանկարծ յորմին արծանացաւ զերթ ստուեր
Հսկայածեւ քաջազանգուր մի պատկեր,
Որ մեղմագին կարծես այս բան կհնչէր.
«Դեռ մեռնելու, ո՛րդեակ, ժամդ չէ հասեր.
«Ջրեզ փրկեց աստուածասէր՝ բարի կեանք,»
Մէկը կասէր թէ խօսողն է հայրն իմ Հայկ:

* *

Դոյզն ինչ խնցաւ փոխուեցաւ դէմք ստուերին,
Աւրիշ քաջ մի բարբառեցաւ սուր ձեռին.
«Դու որ առ սէր Հայաստանի տարագիր
«Մայրենիդ զիրկ եւ կեանք Ազգիդ զոհեցիր.
«Դու, որ սիրես կրօնն ու շէգուն հայկական,
«Պիտի ապրիս», կարծես խօսողն էր Արամ:
Եւ մէկմէկէ ետեւ հսկայք քաջայաղթ
Կշարուէին դեմքն ուրախ եւ զուարթ,
Մին ազգութեան, այլ որ կրօնի ախոյեան,
Տիգրան, Տրդատ, Վառմաշապուհ եւ Վարդան,
Պայազատներ բազրատունեաց, Ռուբենեանց,
Աշոտ, Լեւոն պարծանք զահուն հայկազանց,
Կընէին ինձ ոսկեփետուր խոստմունքներ,
Եւ կազդէին դեռ այս կեանքը պինդ զրկել:

* *

Տարօրինակ յանկարծ լոյս մը ծագեց ի պատին
Սպիտակափայլ ալեօք մարդ մի Խաչ ձեռին.
Մէկ քայլափոխ քրաւ զալու դէպ ինձի,
Բայց խորհուրդը փոխեց՝ կանգնեց մեկուսի.
«Բաւական է կրած խաչդ, թող խրատս
«Լինի, ծայնեց, ուխտի զրժել ծնողացդ.»
Սիրտս կասէր. «պատկերն է Սուրբ Գրիգորի,
Եւ խիղճս. «իրաւ, ուխտիս, խոստմանս զրժեցի.»
Եւ խոստացայ երդմամբ ծերոյն ահաւոր,
Չղջմամբ սրբել յանցանքներս բիւրաւոր,
Եթէ երկինք կեանքս այնչափ կազդուրեն,
Որ ձեռքս եւ ոտքս յօղուտ ազգի ծառայեն:

* *

Առատօտեան արփին գտաւ զիս յեցուած
Գրասեղանիս եւ յայլ խորհուրդ ընկզմած.
Յաւս էր մեղմած, դամբար շիջած, ստուերք անտես.
Կխորհէի. ինչո՞ւ նախնիքս զուարթեա
Երեսցան ինձ եւ քաջալեր կուտային,
Յոյսս բուռեղ այս անցաւոր, հէք կեանքին:
Յանախնակաւ բացուեցաւ դուռ սննեկիս,
Բժիշկս ուրախ կարդաց ինձի աւետիս.
Այս օր բացման ճեմարանին է հանդէս
Դեռ դու հիւանդ մահճին մէջը սլառկեր ես.
Յայնժամ նախնեաց ուրախութիւնն հասկացայ
Եւ նոր սիրով կեանքիս ամուր փարուեցայ:

ՀԱՅԿՈՐԴԻ.

1864.

Ի Վ. ԿԱՐԱՆՈՒՄ.

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

ՊԱՇՏՈՆԱՏՈՒՈՒԹԻՒՆԻ.

Արժ. Մամբրէ Վարդապետ Սանա-
սարեանց՝ ի տեղի Արժ. Կարապետ Վար-
դապետի Գալստեան կարգեցաւ ի Փո-
խանորդութիւն Վիճակին Հայոց Հ. Նա-
խիջեւանի, եւ վերջինն փոխադրեցաւ ի

Հայրութիւն Վանացն Սանահնոյ, որոյ
Վանահայր Տ. Վարդան Եպիսկոպոսն
եւս տեղափոխեցաւ ի Հայրութիւն վա-
նացն Յովհաննու Օձնեցւոյ (որ Օձուն
գեղջ մօտն է) :

Արժ. Գէորգ Վարդապետ Սուրեն-
եանց՝ Ագուլեաց Ս. Թովմայի Առաքելոյ
Վանահայր կարգեցաւ:

Արժ. Անանիա Վարդապետ Համա-
դասպեանց Նոր-Պայաղիտ քաղաքին
եւ շրջագայիցն Քարոզիչ եւ, Դործակալ
նշանակուեցաւ:

ՔՆՆԻԶՔ ՅԱՂԵՔՍԵՆԴՐԵԱՊՈԼ

Ոչ սակաւ Ժամանակէ հետէ Աղեք-
սանդրապոլոյ Փոխանորդին եւ Հոգեւոր
Կառավարութեան անդամոց վերայ՝ թէ
յիրերաց եւ թէ յարտաքուտ երեւե-
ցած եւ գրուած բողոքները եւ ամբաս-
տանութիւնքը քննելոյ համար Գեր-
Անդրէաս Արքեպիսկոպոս եւ Բարեկրօն
Աստուածատուր Աւագ քահանայ Իսա-
հակեանց երեւանցի քննիչ կարգուե-
ցան, եւ յառաջակայ Մեծ Պահոց առա-
ջին շաբթէն զկնի այս ինքն ի 13^ն Փե-
տրովարի պիտի մեկնին աստի յԱզէքսան-
դրապոլ երթալոյ համար:

۱۷۶۴.

Ինչպէս որ կանխաւ յայտարարած էր, Տիվիսայ Մշակութային երկայ տարւոյս Յունվարէ սկսեալ շաբաթական երկու թերթ հրատարակուիլը երեւցաւ՝ տարեկան ԷՅՖՆ ուր . բաժանորդագնոյ:

Գուցէ այսուհետեւ ջանայ Մշակը գրել-
խաւորապէս Հայոց ազգին սեփհական
եւ իրական շահերը նկատելով պաշտ-
պանել եւ այնպէս յուսալ Հայոց հա-
մակիրութեան եւ սիրոյն արժանանալոյ:

ՎԵՐԱԳԱՐԶ Ի ՄԱՅՐԵՆԻ ԵԿԵՂԵՏԻ:

Ի Կ. Պօլսոյ Հայոց Պատրիարքարանէն ստացեալ պաշտօնական տեղեկութիւնք մեծաւ ուրախութեամբ կհասցորդեն, զի Նիկոմիդայ (Իզնիմիտի) վիճակին Պարտիզակ գեղջ բնակիչ մերազնեայ Հռովմէադաւան Կաթողիկոս եւ հինգ բնտանիք՝ իւրեանց քարոզիչ Արժ. Յովսէփ Վարդապետ Այվազեանի հետ վերադարձած են ի ծոց Առաքելական Եկեղեցոյս Հայաստանեայց, որոց վասն օրհնութեան Կոնդակ գրեց Վեհ. Հայրապետ առ Դեր. Ներսէս Ս. Արքեպիսկոպոս Վարժապետեան:

Յիշեալ Վիճակի Առաջնորդն է Գեր-
Տ. Ներսէս Ս. Արքեպիսկոպոս — Պատ-
րիարքն Կ. Պօլսոյ եւ Նորին Գերապա-
տուհւթեան Փոխանորդ է իւր ձեռնա-
սուն աշակերտ Բարեշնորհ Ստեփան
Վարդապետ:

ՀԱՆԳԻՍՏ ՎՐԹԱՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ
ՄՈՒՐԱՏԵԱՆՑ.

Մայր Աթոռոյս միաբաններէն Արժ-
Վրթանէս Վարդապետ Մուրադեանց,
— որ երբեմն Նուխլոյ Փոխանորդ եղած-
միջոցով՝ կաթուածի հիւանդութեան